

Հայաստանյան երիտասարդների ապագայի պլանավորման
պրակտիկաները պրեկարային աշխատանքի համատեքստում (սննդի
վաճառքի և սպասարկման ոլորտի օրինակով)

Արմինե Ղալամդարյան

Անոտացիա

Աշխատանքում պատշաճ հիմնավորվածությամբ անդրադարձ է արվում հայաստանյան հասարակության շրջանակներում ակտուալ հիմնախնդրի՝ անդրադառնալով պրեկարային աշխատանքի համատեքստում երիտասարդների ապագայի պլանավորման պրակտիկաների քննությանը: Պրեկարային զբաղվածության հիմնախնդիրների շարքում ընդգծելով անորոշության գործոնը՝ հեղինակն ուսումնասիրում է սննդի սպասարկման ոլորտում աշխատող հայաստանյան երիտասարդների կենսափորձը: Որպես վերլուծական հիմք ընդունելով նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը՝ հեղինակը մանրամասն նկարագրել է պրեկարային աշխատանքային առօրյայում վերարտադրվող հիմնախնդիրները:

Մույն նյութը պատրաստված է 2021 թվականի մայիսին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում ներակայացված և պաշտպանված ավարտական աշխատանքի հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անտառցիա.....	2
Ներածություն	4
Տեսամեթոդաբանական մոտեցումը	7
Հիմնական բացահայտումներ.....	10
Գրականություն.....	13
Աբստրակտ.....	15
Abstract	15

Ներածություն

Աշխատանքը մարդկային գործունեության ունիվերսալիա է, որը բնորոշ է բոլոր ժամանակների հասարակություններին: Մյուս կողմից, աշխատանքի դրսևորումներն ունիվերսալ չեն. դրանք հարափոխվում են մարդկության պատմական զարգացման ողջ ընթացքում: Մեր ժամանակաշրջանում դրսևորվող աշխատանքի առանձնահատկությունների ձևավորման հարցում առանցքային են նախորդ դարի կեսերին՝ մասնավորապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած հասարակական փոփոխությունները: Այս ժամանակաշրջանը բնորոշվում է կայուն աշխատանքում պարբերական ընդգրկվածության ստանդարտ ձևերի (որոնք տիպական են Առաջին համաշխարհայինին հաջորդող հետպատերազմական, ֆորդիստական հասարակությանը) փոխարինմամբ պրեկարային աշխատանքի ճկուն ձևերով, որն իր հերթին դիտարկվում է որպես ուշ արդիականության կապիտալիզմի խորհրդանիշ (MacDonald, 2009, p. 183): Աշխատանքի դրսևորման «նոր» ձևերն ունեն տարբեր բնորոշումներ՝ ոչ ստանդարտ, ոչ ավանդական, ոչ ֆորմալ, այլընտրանքային և այլն: Դրանք ամփոփված են պրեկարային աշխատանքի (*precarious work*) գաղափարում: Վերջինս սահմանվում է որպես աշխատանք, որն անկայուն է, անկանխատեսելի և ռիսկային աշխատողի տեսանկյունից (Kalleberg, 2009, p.2): Պրեկարային աշխատանքի դրսևորումները կարող են բազմազան լինել, աշխարհում այդպիսիք են համարվում, օրինակ՝ ամրագրված տնտեսությամբ (ժամանակավոր) աշխատանքը, ազատ գրաֆիկով աշխատանքը, սեզոնային աշխատանքը և այլն: Կարևոր է ընդգծել, որ նշվածներն ուղղակիորեն պրեկարային աշխատանքի ենթատեսակներ չեն: Այս կամ այն զբաղվածությունը կարող է որպես այդպիսին բնորոշվել՝ կախված դրա անկայունության, ռիսկայնության, առաջընթացի հնարավորության, իրավունքների պաշտպանվածության տարբեր մակարդակներից և այլն:

Հայաստանյան համատեքստում խնդիրն առավել ակտուալ է ներկայիս սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում, որը մեծապես պայմանավորված է COVID-19 համավարակի և պատերազմի հետևանքներով: Այլ ճգնաժամերի ուսումնասիրությունները ցույց են տալիս ճգնաժամային իրավիճակներում խնդրի ակտուալությունը (Mckay et al., 2012):

ՀՀ-ում տարեցտարի ավելանում է ծառայությունների ոլորտում զբաղվածների թիվը, որն արդեն 2019 թվականին ընդգրկում էր բնակչության կեսից ավելին՝ 55%-ը¹, ընդ որում՝ այս ոլորտում զբաղվածների թվի աճը, ըստ հետազոտությունների, տեղի է ունենում հատկապես գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվի կրճատման հաշվին (Hergnyan et al., 2019): Որպես պրեկարային աշխատանքի դրսևորում՝ հատկապես ակտուալ է սննդի սպասարկման և վաճառքի ոլորտը, որտեղ համեմատաբար

- 1) մեծ է ոչ ֆորմալ տնտեսության մասնաբաժինը (2019 թվականին՝ 15-24 տ՝ 38,9%, 25-54 տ՝ 30,7%)²,

¹ ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2020: *Աշխատանքի շուկայի ցուցանիշներ, 2018-2019*
https://armstat.am/file/article/sv_02_20a_141.pdf

² ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2020: *Ոչ ֆորմալ զբաղվածություն, 2018-2019*
https://www.armstat.am/file/article/trud_2020_4.3.pdf

- 2) ցածր են աշխատավարձերը³,
- 3) փոքր են կարիերայի աճի հնարավորությունները,
- 4) առավել խոցելի են ճգնաժամային պայմաններում:

Աշխատանքային փոխակերպումների համատեքստում պակաս հասկացված են պրեկարային աշխատանքում երիտասարդների ընդգրկվածության դրսևորումները: Չնայած երիտասարդության հետազոտողների մի մասը «պրեկարությունը» համարում է երիտասարդների նոր սոցիալական սերնդի որոշիչ հատկությունը՝ անհրաժեշտ է հասկանալ՝ արդյոք բոլոր երիտասարդներն են պրեկարային աշխատանքը վերապրում (experience) նույն կերպ (Antonucci, 2018, p. 889): Մյուս կողմից, հետազոտողներն առավելապես շեշտադրում են պրեկարային աշխատանքի սոցիալ-տնտեսական կողմերը, մինչդեռ այն կապված է անհատական և սոցիալական կյանքի ավելի լայն շրջանակի հետ, այդ թվում՝ ժամանակի փոփոխականի հետ:

Մի կողմից, երիտասարդների կողմից պրեկարային աշխատանքով զբաղված լինելը դիտարկվում է որպես առավել կայուն, ապահով աշխատանքային շուկա մուտք գործելու բնական ճանապարհ, այսինքն՝ այն դիրտարկվում է իբրև անցումային ժամանակաշրջան՝ այդպիսով ստանալով իր ֆունկցիոնալ պատկերը: Մյուս կողմից, սակայն, հարցադրում է արվում այն մասին՝ արդյոք պրեկարային աշխատանքը «աստիճան» է, թե՞ «թակարդ» (MacDonald, 2009): Այս համատեքստում կենտրոնական է դառնում պրեկարային աշխատանքի ժամանակային չափումը, մասնավորապես «ապագան» որպես սոցիալական կոնստրուկտ, որը հիմնվում է ժամանակայնորեն տարբերակված հեռանկարների հետ կապված պատկերացումների, դիրքորոշումների և ռազմավարությունների վրա» (Miguel Carmo et al., 2014, p. 338):

Այսպիսով, հետազոտության *նպատակն* է վերհանել սննդի վաճառքի և սպասարկման ոլորտում աշխատող հայաստանյան երիտասարդների ապագայի պլանավորման պրակտիկաները: Հետազոտության *օբյեկտն* են սննդի վաճառքի և սպասարկման ոլորտում աշխատող հայաստանյան երիտասարդները (18-35 տարեկան), *առարկան*՝ նրանց ապագայի պլանավորման պրակտիկաները:

Տեղեկատվության հավաքման մեթոդները

- 1) *Տվյալների երկրորդային վերլուծություն* (Վերմիշյան և այլք, 2021), որը միտված է քանակական պատկերը դուրս բերելու միջոցով խնդրի հիմնական համատեքստը վերհանելուն, մասնավորապես՝ պրեկարային բնութագրիչների վերհանմամբ նկարագրել սննդի վաճառքի և սպասարկման ոլորտում աշխատող հայաստանյան երիտասարդների աշխատանքային պայմանները, ինչպես նաև հիմնական մեթոդի շրջանակներում տիպական կենսափորձերի ընտրության չափանիշների և հարցազրույցների թեմատիկ ուղղությունների սահմանմանը:
- 2) *Խորին հարցազրույց նարատիվ մեթոդաբանությամբ*՝ որպես տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդ, վերջինս ուղղված է պրեկարային աշխատանք կատարող երիտասարդների կենսափորձի վերհանմանը՝ մասնավորապես ժամանակի պլանավորման պրակտիկաները՝ որպես հիմնական նարատիվային իզոտոպներից մեկը (Clandinin and Connolly, 2000): Պրեկարային աշխատանք կատարող երիտասարդների կենսափորձը

³ ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2019: *Աշխատավարձ և աշխատողների թվաքանակ 2017-2018*
https://www.armstat.am/file/article/trud_2019_11.pdf

նկարագրող պատումները հնարավորություն են տալիս կառուցել աշխատանքի հետ կապված իրադարձությունների կապակցված շղթան՝ որպես «... մարդու ներքին կյանքի, նրանց միջավայրի վրա սոցիալական ազդեցությունների և նրանց յուրահատուկ անձնական պատմությունների համախմբման արդյունք» (Clandinin and Rosiek, 2019, p. 41):

Հետազոտության ընտրանքը: Իրականացվել է տիպային ընտրանք, ըստ այդմ՝ որպես հետազոտության մասնակիցների ընտրության չափանիշներ՝ սահմանվել են բնակավայրը (Երևան, մարզ), կազմակերպության տիպը (հանրային սննդի կետ, սուպերմարկետ) և սեռը (իգական, արական): Ընդհանուր առմամբ իրականացվել է 16 նարատիվ հարցազրույց:

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանք


		Իգական	Արական
Երևան	Սուպերմարկետ	2	2
	Հանրային սննդի կետ	2	2
Մարզ	Սուպերմարկետ	2	2
	Հանրային սննդի կետ	2	2

Տեսամեթոդաբանական մոտեցումը

Ժամանակը՝ որպես մի կողմից կառուցվածքային ֆենոմեն, մյուս կողմից՝ անհատական կառուցակցում և փորձառություն՝ դիտարկելու տարբեր սոցիոլոգիական հայեցակարգերի ամփոփ դրսևորումը, հենց նարատիվ մեթոդաբանությունն է, որովհետև այն կենսափորձը դիտարկում է որպես մարդու մտածողության շարունակական փոխազդեցություն իր ֆիզիկական, սոցիալական և անձնական միջավայրի հետ: Այսինքն՝ այն հնարավորություն է տալիս ժամանակային պրակտիկաները վերհանել սոցիալական, լեզվական, մշակութային, ինստիտուցիոնալ համատեքստով, որում ձևավորվում, ապրվում և գործում է պրեկարային աշխատանքի կենսափորձը: Միաժամանակ նարատիվ սեմիոտիկայում առանցքային են այն իրադարձությունները, որոնց շուրջ կառուցվում է պատումը: Սա նշանակում է, որ վեր են հանվում երիտասարդների պրեկարային աշխատանքի կենսափորձի կենտրոնական բաղադրյալ իրադարձությունները, որոնք կառուցում են ինքնություններ՝ ստեղծելով ապագայի նախագծման խարիսխներ (Tabboni, 2001, p. 7): Կարևոր է նաև, որ այստեղ ժամանակագրորեն բացահայտվում են կենսափորձում դրսևորվող իրադարձությունները՝ միաժամանակ վերհանելով դրանց տրված նշանակությունները՝ որպես մեթոդաբանական հիմք ունենալով Չ. Պիրսի, Չ. Մորիսի սեմիոտիկ ուսումնասիրություններն ու Ֆ. դե Սոսյուրի կառուցվածքային լեզվաբանությունը, որտեղ կենտրոնականը լեզվական նշանային համակարգերն են: Գրեյմսյան նարատիվ սեմիոտիկան, արդեն կրելով Վ. Պրոպի՝ հեքիաթների վերլուծության ազդեցությունը, նարատիվն է դիտարկում որպես նշանային համակարգ: Այդ տեսանկյունից էլ Գրեյմսյան մեթոդաբանությունը թույլ է տալիս վերհանել ժամանակային չափումը և դրան տրվող իմաստները, այսինքն՝ փոփոխությունները և կենսափորձի յուրաքանչյուր դրվագում հիշողության միջոցով դրանց կապակցումն ու համեմատումը, ինչպես նշում էր Ն. Էլիասը (Ellias, 1992, p. 73):

Հետազոտության շրջանակներում դուրս է բերվել պրեկարայնության համատեքստում ապագայի պլանավորման սխեմա՝ հաշվի առնելով նարատիվ սեմիոտիկ մեթոդաբանության շրջանակներում իմաստային (սեմիոտիկ) քառակուսու առանձնահատկությունները: Վերջինիս կառուցումը հիմնվում է կապի և տարանջատման սկզբունքների վրա: Գոյություն ունի տարանջատման երկու տեսակ՝ հակադրությունների և հակասությունների: Քառակուսուում ձևավորվում են երեք տիպի փոխհարաբերություններ՝

- 1) հակադրության հարաբերություններ՝ քառակուսու հորիզոնական առանցքով (S1 և S2, -S1 և -S2),
- 2) հակասության հարաբերություններ՝ քառակուսու անկյունագծով (S1 և -S1, S2 և -S2),
- 3) կոմպլեմենտարության (փոխլրացման) հարաբերություններ՝ քառակուսու ուղղահայաց առանցքով (S1 և -S2, S2 և -S1) (Greimas and Rastier, 1968, p. 88):



Գծապատկեր 1. Իմաստային քառակուսի

Սկզբում սահմանվում է S1 դաշտը, այնուհետև ըստ վերը նշված սկզբունքների՝ օպերացիոնալիզացվում են նաև մյուս դաշտերը: Իմաստային քառակուսու յուրաքանչյուր առանցք բնորոշվում է դրանում առկա երկու հիմնական արժեքով (Fiol, 1989, p. 8): Յուրաքանչյուր փուլ տեղադրվում է առանցքներից մեկի վրա՝ այդպիսով ցույց տալով դրանում առկա գերակա արժեքը և հարաբերությունների դինամիկան ընդհանուր պատումում:

Հետազոտության տեսական հիմքերից ելնելով՝ կարելի է ասել, որ արդի ժամանակաշրջանի և դրանում պրեկարային պրակտիկաների հիմնական հատկությունն անորոշությունն է, ըստ այդմ՝ սույն հետազոտության նպատակներից ելնելով՝ այն տեղադրված է իմաստային քառակուսու առաջին վանդակում, իսկ հակադիր գույգը որոշակիությունն է: Դրանց հակադրությունը ցույց է տալիս ապագայի հեռանկարների կանխատեսման ճշգրտության աստիճանը (FeldmanHall and Shenhav, 2019, p. 426): Այսպիսով, անորոշության և որոշակիության արժեքները բնորոշող հակադիր գույգերը հետևյալն են՝

- 1) անկայունություն-կայունություն. առաջինը՝ որպես հոսուն արդիականության պայմաններում պրեկարային աշխատանքի ցուցիչ, երկրորդը՝ որպես դասական արդիականությանը բնորոշ աշխատանքային պրակտիկաների որակ (Bauman, 2000),
- 2) ռուտինիզացիա-փոփոխություն. ռուտինիզացիան ցույց է տալիս առօրեականության իրադարձությունների ցիկլիկ և ոչ յուրահատուկ լինելը (Sztompka, 2008, p. 31)՝ կրկնությունը, իսկ փոփոխությունները կապված են մարդու անձնական, ֆիզիկական, սոցիալական միջավայրերի իրադարձությունների հետ, որոնց շուրջ կառուցվում է կենսափորձը (Ellias, 1992; Tabboni, 2001; Sztompka, 2008),
- 3) կոլեկտիվիզմ-ինդիվիդուալիզմ. հիմքում ժամանակի վերապրման երկու հիմնական ուղղվածություններն են՝ դեպի խմբային կամ անձնական կյանքի ռիթմը սոցիալական ադապտացիայի համատեքստում (Mukerjee, 1990, p. 47),
- 4) պասիվություն-նախաձեռնողականություն. աշխատանքային պրակտիկաների տարբերակումն է՝ արդյունքի տեսանկյունից, երբ մի դեպքում արդյունքները պատահական ընձեռնված հնարավորության, դեպքերի պատահական ընթացքի, մյուս դեպքում՝ սեփական նախաձեռնողականության, նախագծման հետևանք են (Bauman, 2000; Standing, 2011),
- 5) դրվագայնություն-կուտակայնություն (ֆրագմենտարություն-կումուլյատիվություն). առաջինը ներկայացնում է ներկայի վրա կենտրոնացվածությունն ու ռազմավարությունների կարճաժամկետությունը, երկրորդը՝ դեպի ապագան ուղղված փորձի, գիտելիքների, հմտությունների կուտակումն է, այլ կերպ ասած՝ դրվագայնությունը ցույց է տալիս անցյալի, ներկայի և ապագայի կապի բացակայությունը, կուտակայնությունը՝ դրանց կապը (Bauman, 2000),
- 6) բարձր ռիսկայնություն-ցածր ռիսկայնություն. ռիսկն առհասարակ արդի ժամանակաշրջանին բնորոշ որակ է (Beck, 1992), իսկ այս տարբերակումը ցույց է տալիս աշխատանքի տարբեր կողմերի վտանգավորության աստիճանը,
- 7) հույսերի գերակայություն-իրական հնարավորությունների հաշվարկ. ցույց է տալիս ապագայի պլաններում սպասումների, երազանքների, ակնկալիքների և կոնկրետ գործողությունների, այլընտրանքների դիտարկման հակադրությունը (Bourdieu, 2000, p. 212):

Այսպիսով, Գրեյմսսի կողմից առաջարկված հարաբերությունների հակադրության, հակասության և կոմպլեմենտարության սկզբունքների և տեսական մոտեցումների համադրման արդյունքում

ստացվում է պրեկարային աշխատանք կատարող երիտասարդների ապագայի պլանավորման պրակտիկաները նկարագրող իմաստային քառակուսին, որը հիմք է ծառայում որակական տվյալների վերլուծության համար:



Գծապատկեր 2. Պրեկարային աշխատանք կատարող երիտասարդների ապագայի պլանավորման պրակտիկաները նկարագրող իմաստային քառակուսի

Հիմնական բացահայտումներ

Մենքի սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատող հայաստանյան երիտասարդների ապագայի պլանավորման պրակտիկաների վերհանման նպատակով արված քանակական և որակական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա գալիս ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

- 1) Այս ոլորտում աշխատելու հիմնական գործոնը եկամուտը/աշխատավարձերն են: Միաժամանակ իրական եկամուտները նշանակալիորեն տարբերվում են տվյալ աշխատանքի դիմաց սպասվող և բարեկեցիկ ապրելու համար անհրաժեշտ եկամուտներից: Եկամուտները կարելի է բնորոշել ոչ կայունությամբ՝ կապված լինելով հավելավճարներ ստանալ/չստանալու, հերթափոխով/առանց հերթափոխի աշխատելու հետ: Մյուս կողմից, ժամանակային ծանրաբեռնվածության ավելացումը չի բերում եկամտի նշանակալի ավելացման:
- 2) Ներկայումս ավելի բարձր եկամուտներ ունեցողներն ավելի շատ եկամուտ են ակնկալում ստանալ իրենց կատարած աշխատանքի դիմաց, մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցիչները, հանրային սննդի կետում աշխատողները, Երևանում աշխատողները:
- 3) Իրական եկամուտը կապված չէ կրթական մակարդակի հետ՝ ի տարբերություն սպասվող եկամտի. բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի բարձր եկամուտներ են ակնկալում, քան միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողները, ինչը կարող է բերել կարգավիճակի ֆրուստրացիայի համավարակի (Standing, 2011, p. 67):
- 4) Աշխատանքի պայմանագրային կողմը նույնպես ցույց է տալիս կայունության բացակայություն, քանի որ հարցվողների մեծ մասի պայմանագիրը չի ենթադրում հստակ ժամանակահատված, մի մասն էլ պայմանագիր չունի:
- 5) Մի կողմից հարցված երիտասարդների մեծ մասը նշել է, որ տվյալ տեղում կաշխատի այնքան ժամանակ, որքան հնարավոր կլինի, մյուս կողմից, որ հինգ տարի հետո չի ցանկանա կատարել նույն կամ նմանատիպ այլ աշխատանք, ինչը ցույց է տալիս ապագայի պլանավորումներում երիտասարդների ցանկությունների և կոնկրետ ռազմավարությունների անհամապատասխանությունը:

Նարատիվ սեմիոտիկ վերլուծությամբ վերհանվեց երևանյան և մարզային սուպերմարկետի և հանրային սննդի կետի աշխատող արական և իգական սեռի ներկայացուցիչների կենսափորձը՝ ըստ երեք թեմատիկ բլոկների՝ մինչև ոլորտ մտնելը, ոլորտ մտնելու սկզբնական և հետագա ընթացքը, աշխատանքի ներկա փուլը: Ըստ այդմ՝

Առաջին փուլում նարատիվային հարաբերությունները բնորոշվում են անորոշությամբ: Հետազոտության մասնակիցների բոլոր տիպերի պարագայում այս փուլում տվյալ ոլորտ մտնելու վրա առավել մեծ ազդեցություն են ունենում պրակտիկաների դրվագայնությունն ու պատահականությունը, ինչպես նաև ֆինանսական անկայունությունը:

Երկրորդ փուլում հարաբերությունները բնորոշվում են մի կողմից՝ անորոշությամբ, մյուս կողմից՝ որոշակիությամբ: Այս փուլում առավել հաճախակի են դրսևորվել

- 1) անորոշության ցուցիչներից կոլեկտիվիզմը և դրվագայնությունը՝ ընդհանրապես, բարձր ռիսկայնությունն ու ռուտինիզացիան՝ հատկապես իգական սեռի ներկայացուցիչների նարատիվներում,

- 2) որոշակիության ցուցիչներից կուտակայնությունը՝ ընդհանրապես, փոփոխություններն ու իրական հնարավորությունների հաշվարկը՝ հատկապես արական սեռի ներկայացուցիչների նարատիվներում,
- 3) այս փուլում չի հաղթահարվում կայունության խնդիրը՝ դրսևորվելով որպես ոչ կայունություն:

Երրորդ փուլում ապագայի պլանավորման պրակտիկաները բնորոշվում են իմաստային քառակուսու անորոշության արժեքով, սակայն միաժամանակ դրսևորվում են մյուս արժեքներից մեկական ազդեցիկ ցուցիչներ: Այսպիսով,

- 1) Անորոշության ցուցիչներից առավել հաճախակի են դրսևորվում բարձր ռիսկայնությունը, կոլեկտիվիզմը: Այստեղ ապագայի պլանների նկատմամբ առավել գերակա են հույսերը, քան իրական հնարավորությունները: Կարևոր է ընդգծել, որ այս փուլում ռուտինիզացիան դրսևորվում է բոլոր տիպերի նարատիվներում, ընդ որում՝ կոգնիտիվ մակարդակում այն օգնող գործոն է, պրագմատիկ մակարդակում՝ խոչընդոտող:
- 2) Որոշակիության քառակուսուց այս փուլում շարունակվում է դրսևորվել կուտակայնությունը, ոչ անորոշությունից՝ ոչ պասիվությունը:
- 3) Համեմատության մեջ կարելի է նաև ասել, որ ներկա փուլում՝ մարզերում աշխատողների դեպքում ավելի հաճախ է դրսևորվում ֆինանսական կայունությունը, իսկ Երևանում աշխատողների դեպքում՝ ոչ կայունությունը:

Համադրելով քանակական և որակական տվյալների վերլուծությունը՝ կարելի է ասել հետևյալը.

- 1) Ինչպես ոլորտ մտնելու, այնպես էլ դրանում աշխատանքը շարունակելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի եկամուտը՝ անկայուն և ոչ կայուն:
- 2) Աշխատանքային պրակտիկաները կապված չեն նախորդ փորձի հետ, այդ թվում՝ մասնագիտական կրթության: Նարատիվ հարցազրույցները ցույց տվեցին, որ մի շարք օբյեկտիվ (կրթություն-աշխատաշուկա կապ, աշխատաշուկայի հնարավորություններ) և սուբյեկտիվ (մասնագիտության ընտրություն, հետաքրքրություններ, արական սեռի դեպքում՝ բանակի, իզական սեռի դեպքում՝ ամուսնությունների ազդեցություն) պատճառներով պրակտիկաները դառնում են դրվագային՝ կենտրոնացված ներկա կոնկրետ խնդրի վրա՝ այն չկապելով անցյալի փորձի և ապագայի երկարատև պլանների հետ: Սա ընդգծում է երիտասարդների կողմից պրեկարային աշխատանք կատարելու գործիքային (ինստրումենտալ) բնույթը և պլանների ու ռազմավարությունների կարճաժամկետությունը, կենտրոնացվածությունը կյանքի տվյալ դրվագի հաջողության վրա:

Ինչպես ցույց է տվել քանակական վերլուծությունը, չնայած «ոչ սոցիալական ժամերով» աշխատելուն՝ եկամուտների և ժամանակային ծանրաբեռնվածության կապը թույլ է: Նարատիվ սեմիոտիկ վերլուծությունը ցույց տվեց, որ այդպիսով աշխատանքը վերածվում է ռուտինային՝ զբաղեցնելով ժամանակի մեծ մասը և անընդհատ կրկնելով պրակտիկաների շրջապատույտը: Այդ կերպ ժամանակի փորձառության ձևերից գերակա է դառնում կրկնությունը և պակասում են այն նշանակալի իրադարձությունները, որոնք հիմք են ստեղծում ինքնությունների և ապագայի պլանավորման համար, ընդ որում՝ տարիների ընթացքում ծանրաբեռնվածության ավելացման հետ դա սկսում է վերաբերել ոչ միայն աշխատանքային հեռանկարներին, այլև կապվում է կյանքի ավելի լայն շրջանակի հետ՝ ամուսնություն, շփումներ, կրթություն և այլն: Հետաքրքիր է, որ դա կոգնիտիվ մակարդակում գիտակցված է հարցված երիտասարդների կողմից, ինչը հիմք է այս

ուրրտից դուրս գալու ցանկություններին, սակայն միաժամանակ խոչընդոտում է այնպիսի կուտակային պրակտիկաների, որոնք պրագմատիկ մակարդակում ուղղված են պլանների իրականացմանը:

Քանակական տվյալները ցույց տվեցին, որ այս ոլորտում աշխատելու գործոններում եկամտին հաջորդում է աշխատելը հաճելի մարդկանց հետ, ընդ որում՝ ավելի շատ, քան օրինակ՝ կարիերա անելու/առաջխաղացման հնարավորությունները: Նարատիվներում նույնպես երևում է աշխատավայրում սոցիալական հարաբերությունների կարևորումը, հաճախ՝ առաջնայնությունը: Դա նշանակում է, որ հաճախ գործողությունները համաժամանակեցվում են ժամանակի խմբային ռիթմի հետ, ինչը կապված է սոցիալական ադապտացիայի բարձր մակարդակի հետ:

Ե՛վ քանակական, և՛ որակական տվյալները ցույց են տալիս, որ ցանկություններն ու պլանավորումը ոչ ամբողջությամբ են համընկնում: Ապագայի հեռանկարներում ավելի շատ գերիշխում են դրա մասին սպասելիքները, հույսերը (*illusion*), քան իրական հնարավորությունների հաշվարկը (*lusion*), որը ենթադրում է ռիսկերի հաշվարկ և այլընտրանքների մշակում: Ստացվում է, որ երիտասարդները նախընտրում են ռիսկի չդիմել, ինչի վրա դարձյալ ազդեցություն է ունենում կայունության բացակայությունը:

Այսպիսով, պրեկարային աշխատանքում ընդգրկվածությունը փոխում է ապագայի նախնական պլանները, և անընդհատ չլուծվող կայունության խնդիրն ու աստիճանական ռուտինիզացիան վերարտադրում են ապագայի պլանավորման անորոշությունը՝ աշխատանքը դարձնելով ոչ թե «աստիճան», այլ «թակարդ» երիտասարդների համար:

Գրականություն

- Վերմիշյան, Հ., Միշիկյան, Ս., Ղալամդարյան, Ա., 2021: *Մենդի վաճառքի և սպասարկման ոլորտում աշխատողների աշխատանքային պայմանները Հայաստանում*, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Երևան:
<https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/18410.pdf>
- Antonucci, L., 2018. *Not all experiences of precarious work lead to precarity: the case study of young people at university and their welfare mixes*. Journal of Youth Studies 21, 888–904.
<https://doi.org/10.1080/13676261.2017.1421749>
- Bauman, Z., 2000. *Liquid Modernity*. Polity Press, Cambridge.
- Beck, U., 1992. *Risk society: Towards a new modernity*. SAGE Publications Ltd.
- Bourdieu, P., 2000. *Pascalian meditations*. Stanford University Press.
- Clandinin, D.J., Connelly, F.M., 2000. *Narrative Inquiry: Experience and Story in Qualitative Research*. Jossey-Bass, San Francisco.
- Clandinin, D.J., Rosiek, J., 2019. *Mapping a Landscape of Narrative Inquiry: Borderland spaces and tensions*, in: Journeys in Narrative Inquiry. Routledge, pp. 228–264.
<https://doi.org/10.4324/9780429273896-15>
- Ellias, N., 1992. *Time: An Essay*. Blackwell.
- FeldmanHall, O., Shenhav, A., 2019. *Resolving uncertainty in a social world*. Nature Human Behaviour 3, 426–435. <https://doi.org/10.1038/s41562-019-0590-x>
- Fiol, C.M., 1989. *A Semiotic Analysis of Corporate Language: Organizational Boundaries and Joint Venturing*. Administrative Science Quarterly 34, 277–303. <https://doi.org/10.2307/2989899>
- Greimas, A.J., Rastier, F., 1968. *The Interaction of Semiotic Constraints*. Yale French Studies 41: Game, 86–105. <https://doi.org/10.2307/2929667>
- Hergnyan, M., Hovhannisyan, S., Zakaryan, S., Manukyan, S., 2019. *National competitiveness report of Armenia 2019: The future of jobs in Armenia*. EV Consulting, Economy and Values Research Center, Yerevan.
- Kalleberg, A.L., 2009. *Precarious Work, Insecure Workers: Employment Relations in Transition*. American Sociological Review 74, 1–22. <https://doi.org/10.1177%2F000312240907400101>
- MacDonald, R., 2009. *Precarious work: risk, choice and poverty traps*, in: Andy, F. (Ed.), Handbook of Youth and Young Adulthood. Routledge, London, pp. 183–191.
- Mckay, S., Jefferys, S., Paraksevopoulou, A., Keles, J., 2012. *Study on precarious work and social rights*. Working Lives Research Institute; Faculty of Social Sciences and Humanities, London Metropolitan University, London.
- Miguel Carmo, R., Cantante, F., de Almeida Alves, N., 2014. *Time projections: Youth and precarious employment*. Time & Society 23, 337–357. <https://doi.org/10.1177/0961463X14549505>
- Mukerjee, R., 1990. *Time, Technics and Society*, in: Hassard, J. (Ed.), The Sociology of Time. Palgrave Macmillan UK, London, pp. 47–55. https://doi.org/10.1007/978-1-349-20869-2_4
- Standing, G., 2011. *The Precariat: The New Dangerous Class*. Bloomsbury Publishing.

- Sztompka, P., 2008. *The Focus on Everyday Life: a New Turn in Sociology*. European Review 16, 23–37. <https://doi.org/10.1017/S1062798708000045>
- Tabboni, S., 2001. *The Idea of Social Time in Norbert Elias*. Time & Society 10, 5–27. <https://doi.org/10.1177/0961463X01010001001>

Աբստրակտ

Ժամանակակից աշխարհում փոխվում են աշխատանքի պրակտիկաները՝ ձեռք բերելով անկայունության, ռիսկայնության, անկանխատեսելիության հատկություններ, այլ կերպ ասած՝ բնորոշվում են պրեկարայնությամբ: Դա փոխում է նաև ապագայի հեռանկարները: Հայաստանյան համատեքստում խնդիրն առավել տիպական ձևով դիտարկելի է սննդի սպասարկման և վաճառքի ոլորտում, իսկ ապագայի պլանավորման տեսանկյունից առավել ակտուալանում է դրանում ընդգրկված երիտասարդների կենսափորձը: Սույն հետազոտության նպատակն է վերհանել պրեկարային աշխատանք կատարող հայաստանյան երիտասարդների ապագայի պլանավորումները: Այդ նպատակով մշակվել են անհրաժեշտ տեսամեթոդաբանական ռազմավարություններ և սխեմաներ: Տեղեկատվության հավաքագրման համար իրականացվել են քանակական տվյալների երկրորդային վերլուծություն և նարատիվ հարցազրույցներ, որոնք իրականացվել են Երևանում և մարզերում բնակվող սննդի սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատող արական և իգական սեռի ներկայացուցիչների հետ: Որակական տվյալների վերլուծության համար կիրառվել է նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը: Հետազոտությունը ցույց տվեց, որ այդ ոլորտում զբաղված երիտասարդների ապագայի պլանավորումներում շարունակաբար վերարտադրվում է անորոշությունը՝ պայմանավորված լինելով ներկայում կայունության բացակայությամբ և աստիճանական ռուտինիզացիայով:

Բանալի բառեր. աշխատանք, պրեկարայնություն, ապագայի պլանավորում, սպասարկման ոլորտ, երիտասարդություն, անորոշություն, ռիսկ, ռուտինիզացիա, անկայունություն

Abstract

In the modern world, work practices are changing, acquiring the properties of instability, riskiness, and unpredictability, in other words, they are characterized by precariousness. It changes the prospects of the future. In Armenia, the problem can be seen in a more typical way in the field of food service and sales. From the point of view of future planning, the life experience of the young people involved in it is more actual. This study aims to reveal the future plans of youth employed in the precarious type of jobs in Armenia. For this purpose, the necessary theoretical-methodological strategies and schemes have been developed. For data collection, secondary quantitative data analysis and narrative interviews were conducted with male and female employees in the field of food service and sales in Yerevan and regions. The methodology of narrative semiotics was used for the analysis of qualitative data. The research showed that the uncertainty in the future planning of the young people engaged in this field is constantly reproduced, due to the current lack of stability and gradual routinization.

Keywords: labor, precariousness, future planning, service sector, youth, uncertainty, risk, routinization, instability